Funded by the European Union
AGBU ARMENIA
CreativeArmenia
ArtNexus Konstnärsnämnden The Swedish Arts Grants Committee
Sweden Sverige
Katapult CREATIVE ACCELERATOR PROGRAM

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

Ներմուծում, արտահանում, փաթեթավորում, տեղադրում, ապահովագրություն, մաքսազերծում և մշակութային ժառանգության ճգնաժամային կառավարում

Երևան, 2024

Funded by the European Union
AGBU ARMENIA
CreativeArmenia
ArtNexus Konstnärsnämnden The Swedish Arts Grants Committee
Sweden Sverige
Katapult CREATIVE ACCELERATOR PROGRAM

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

Ներմուծում, արտահանում, փաթեթավորում, տեղադրում, ապահովագրություն, մաքսազերծում եւ մշակութային ժառանգության ճգնաժամային կառավարում

Սույն ձեռնարկի հրատարակումը հնարավոր է դարձել Եվրոպական միության եւ Ծվեդիայի արվեստի դրամաշնորհների կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության պատասխանատուն հեղինակն է, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության եւ/կամ Ծվեդիայի արվեստի դրամաշնորհների կոմիտեի տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ..... 4

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ.
ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ՝ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՏԵՂԱԴՐՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՔՍԱԶԵՐԾՈՒՄ..... 6

1. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ
ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲԱԺԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ.....9
..
3. ՈՐՆ Է ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ..... 14

4. ԻՆՉ ԿԱՐԳՈՎ ԵՆ ԱՐՏԱՀԱՆՎՈՒՄ ԱՌԱՆՑ ՏԱՐԵԹՎԻ ՈՒ ԱՌԱՆՑ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԸ..... 19

5. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ..... 20

6. ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ՝
ԸՍՏ ՓՈՒԼԵՐԻ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ..... 25

7. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.. 32

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ..... 35

9. ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ, ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒ «ԿԱՆԱՉ» ԵՎ «ԿԱՐՄԻՐ» ՈՒՂԻՆԵՐ, ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԵՐ: ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏՈՒՐՔԵՐԸ..... 39

10. ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ..... 42

11. ՈՒՂԵՑՈՒՅՑ..... 46

12. ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ..... 48

13. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐ..... 50

14. ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՂՆԵՐ..... 52

ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ (ՄԻՋՆՈՐԴՆԵՐ/ԲՐՈՔԵՐՆԵՐ)..... 54

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ..... 56

1. ԳՆԱՀԱՏՈՒՄ..... 59

2. ՍԱՀՄԱՆՈՒՄ..... 60

3. ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ..... 61

4. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ..... 65

Հավելված 1. Նմուշի նույնականացման տվյալներ..... 68

Հավելված 2. Գույքագրման թերթիկ..... 69

Հավելված 3. Տեսակավորում եվ կայունացում..... 69

Հավելված 4. Փաթեթավորում ու տեղափոխում..... 70

Հավելված 5. Տեղափոխման շարժին հետեվելու ձեվաթուղթ..... 70

ՆԱԽԱԲԱՆ

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը՝ «Ստեղծարար Հայաստան» (Creative Armenia) մշակութային հիմնադրամի հետ համագործակցությամբ, իրականացնում է «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագիրը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Նպատակ հետապնդելով խթանելու ստեղծարար եւ մշակութային ոլորտների էկոհամակարգը Հայաստանում՝ «Կատապուլտը» հզորացնում է ստեղծագործ մասնագետներին, տրամադրելով կրթություն, ձեռնարկատիրական հմտություններ եւ տեսանելիություն, ինչպես նաեւ ձգտում է լրացնել առկա ծառայությունների, տեխնոլոգիաների, հաստատությունների եւ ենթակառուցվածքների բացերը՝ կայուն եւ բարգավաճ մշակութային արդյունաբերություն ապահովելու համար:

ՀԲԸՄ «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագրի եւ շվեդական «ԱրտՆեքսուս» ծրագրի համագործակցության շրջանակում իրականացված Հայաստանի ստեղծարար ոլորտի կարիքների հետազոտության արդյունքում (Գարգարյան, Ա., Վահան, Տ. 2024, «Հայաստանի Հանրապետության մշակութային եւ ստեղծարար էկոհամակարգը» կարիքների գնահատում եւ տնտեսագիտական վերլուծություն զեկույց) պարզվել է, որ չնայած Հայաստանում արվեստի գործերի տեղափոխման հետ կապված օրենքների եւ կանոնակարգերի առկայությանը, գոյություն ունեն լուրջ խոչընդոտներ արվեստի գործերը հավուր պատշաճի Հայաստան ներմուծելու եւ Հայաստանից արտահանելու գործընթացների սահուն կազմակերպման համար:

Արձագանքելով այս խնդրին՝ «Կատապուլտը» եւ «ԱրտՆեքսուսը», ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հետ համատեղ, Հայաստանում կազմակերպեցին համապատասխան մասնագետների վերապատրաստում - աշխատաժողով, որի նպատակն էր ընդլայնել մասնակիցների ընկալումը ընթացակարգերի եւ պահանջների վերաբերյալ, ներառյալ արվեստի գործերի փաթեթավորումը, տեղափոխումը, գնահատումը, ապահովագրությունը,

մաքսազերծումը եւ պահեստավորումը: Մասնակիցները ստացան փորձագիտական գիտելիքներ, թե ինչպես գրագետ ներմուծել եւ/կամ արտահանել արվեստի գործերը:

Աշխատաժողովի արդյունքում ձեւավորվեց փորձագիտական գիտելիքներով զինված մասնագետների թիմ՝ արվեստի գործերի առաքումը Հայաստան եւ Հայաստանից դուրս պատշաճ կերպով իրականացնելու համար, ինչպես նաեւ այդ գործընթացները բարելավելու եւ արվեստագետներին/հաստատություններին աջակցելու նպատակով կառավարությանը ներկայացվեցին ռազմավարական բարեփոխումների առաջարկներ:

Ձեռնարկի երկրորդ բաժնում ներկայացված է «Առաջին օգնություն մշակութային ժառանգությանը՝ ճգնաժամային պայմաններում» ուղեցույցը, որի հիմքում Եգիպտական մշակութային ժառանգության փրկության հիմնադրամի գործադիր տնօրեն, մշակութային ժառանգության պահպանության փորձագետ Ամիրա Սադիք Ալիի դասախոսությունն է: Այն «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագիրը նախաձեռնել էր ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ ICOM Հայաստանի ազգային կոմիտեի հետ համատեղ: Դասախոսության նպատակն էր հզորացնել Հայաստանի մարզային թանգարանների աշխատակիցների՝ ճգնաժամային պայմաններում մշակութային ժառանգության պահպանության կարողությունները:

Ներկայացվող Ձեռնարկը ստեղծարար ոլորտի համապատասխան մասնագետների ուղեցույցը կդառնա արվեստի գործերի գրագետ ներմուծման եւ արտահանման գործընթացում:

Նարեկ Վ. Թովմասյան
Արվեստագիտության թեկնածու

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ.

ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՏԵՂԱԴՐՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՔՍԱՋԵՐԾՈՒՄ

1. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Տասնվեց տարին լրացած ցանկացած քաղաքացի (արվեստագետ, հավաքորդ, արտ-դիլլեր, ցուցահանդեսի կազմակերպիչ), որը զբաղվում է արվեստի ժամանակակից գործերի առք ու վաճառքով, ցուցահանդեսների կազմակերպմամբ եւ այլն, ցանկանում է արվեստի գործեր արտահանել Հայաստանի Հանրապետությունից, պետք է առաջին հերթին արտահանման թույլտվություն ստանա պետական լիազոր մարմնից՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից: Իսկ դրա համար նախ պետք է (010) 599699 հեռախոսահամարով զանգահարի ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության վարչության մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման բաժին եւ գրանցվի: Այնուհետեւ, նշանակված օրը քաղաքացին պետք է իր անձնագրով, անձնագրի պատճենով ներկայանա նախարարություն՝ իր հետ բերելով այդ աշխատանք(ներ)ի 10x15 չափի տպագրած երեք միանման լուսանկարներ՝ արված առջեւից, իսկ եթե գործի վերաբերյալ տվյալներն ուրիշ կողմում են, ապա մի մոտեցված նկար էլ՝ այդ մասից:

Գերադասելի է գործերն այն վիճակում ներկայացնել, որ երեւան գործին վերաբերող տվյալները՝ հեղինակ, ամսաթիվ, դրանք քողարկված չլինեն, որպեսզի ստիպված բացելու դեպքում գործը չփչանա:

Առանձին թղթի վրա ամեն գործի համար պետք է ներկայացնել հետեւյալ տեղեկատվությունը՝ գործի հեղինակ, անվանում, ամսաթիվ, չափեր, գործի նյութը, եթե նկար է, ապա տպագրության ու ներկերի տեսակները: Եթե գործի շառավիղը գերազանցում է մեկ մետրը, գործընթացն իրականացվում է տեսանկարահանումով (համապատասխան ընթացակարգը անհրաժեշտ է ճշտել ԿԳՄՍ նախարարությունից):

2. ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲԱԺԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման բաժնում քաղաքացու ներկայացրած լուսանկարը նույնականացնում են այն արվեստանմուշի հետ, որը նա պատրաստվում է արտահանել, ապա բաժնի աշխատակիցը լուսանկարներից երկուսի դարձերեսին նշում է ստեղծագործության չափորոշիչները, որպեսզի տվյալ արվեստի գործը (կտավը, քանդակը եւ այլն) փորձաքննության չգնա: Պարտադիր պայման է, որ կտավը եւ առհասարակ արվեստի ցանկացած գործ լինի թվակիր եւ ստորագիր: Դրա նպատակը մշակութային արժեքի արտահանման ռեժիմը որոշելն է:

Բացառությամբ կառավարության հատուկ ցանկով հաստատված ստեղծագործությունների՝ մնացած գործերն արտահանվում են որպես մշակութային նշանակության առարկաներ: Լիազոր մարմինը կնիքով վավերացնում է նկարի իսկությունը, ինչը քաղաքացու ցանկությամբ է արվում, որովհետեւ մինչեւ հիսուն տարվա վաղեմություն ունեցող արվեստի գործերը ազատ կարող են արտահանվել՝ բացառությամբ հատուկ ցուցակով նշված հեղինակների *(ցուցակը ներկայացված է սույն Զեռնարկի «Հաճախ տրվող հարցեր» բաժնում)*: Լուսանկարներից երկուսի դարձերեսին նշվում են ստեղծագործության չափորոշիչները, իսկ երրորդ լուսանկարի վրա լիազոր մարմինը օտարալեզու դրոշմակնիք է դնում, որը քաղաքացուն ազատում է տարանցիկ գոտիներում մաքսային մարմինների հարցադրումներից: Քաղաքացու անձնագրի պատճենի մեկ օրինակով եւ իր ձեռքով լրացված, ստորագրված, հաստատված դիմում-հայտով գործ է կազմվում եւ արխիվացվում լիազոր մարմնում:

Եթե արվեստագետը մեկնել է ցուցահանդեսի ու Հայաստան է վերադառնում՝ իր հետ բերելով տարված բոլոր գործերը, չհարկվելու

համար նա պետք է հայտարարագիր լրացնի։ Իսկ Հայաստանից դուրս գալիս քաղաքացին պետք է արվեստանմուշը, մշակութային նշանակության առարկան ձեւակերպի որպես ժամանակավոր արտահանում։ Լիազոր մարմինը քաղաքացու ցանկությամբ տալիս է ժամանակավոր արտահանման իրավունք, եթե քաղաքացին նշում է, թե որ ժամկետներում է ուզում արտահանել արվեստի գործերը։ Սակայն, եթե քաղաքացին արվեստի գործերով *(իր հեղինակային կամ այլ ժամանակակից որեւէ հեղինակի)* մեկնում է երկրից դուրս, օրինակ, ցուցահանդես-վաճառքի մասնակցելու կամ աշխատանքները որեւէ վայրում նվիրաբերելու նպատակով, պարզապես օդանավակայանում կարող է լրացնել ուղեւորի մաքսային հայտարարագիր, ու երբ վերադառնա՝ իր հետ բերելով կտավների մի մասը, մաքսայինում որեւէ բան հայտարարագրելու կարիք չի լինի։

Ինչ վերաբերում է թանգարաններին, թույլատրական փաստաթուղթը նրանց պարագայում տրվում է ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ սահմանված ժամկետի համար։

Քանի որ մեծ չափի կտավների, խոշոր քանդակների ու մշակութային նշանակության առարկաների առումով մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման բաժին տեղափոխելու հետ կապված դժվարություններ կարող են առաջանալ, քաղաքացիներից պահանջվում է մինչեւ երեսուն վայրկյան տեւողությամբ տեսագրություն ներկայացնել։ Պետք է այնպես նկարահանել խոշոր կտավները, քանդակները, ընդհանրապես՝ արվեստի մեծածավալ գործերը, որ երեւան վարպետի տվյալները եւ ստեղծման տարեթիվը։

Քանի որ հաստոցային գործերի պարագայում անհատ ձեռներեցի (ԱՁ) անունը չի գրվում, քաղաքացին պետք է տվյալ ԱՁ-ից տեղեկանք ներկայացնի այն մասին, թե ինչ նյութից է պատրաստված, դիցուք, տվյալ խաչքարը, ինչ չափերի է եւ այլն։ Այդ տեղեկանքի հիման վրա քաղաքացուն տրամադրվում է թույլտվություն։

Գորգերի ու կարպետների դեպքում նույնպես հարկ է ուղարկել մինչեւ երեսուն վայրկյան տեւողությամբ տեսագրություն, որպեսզի իրականացվեն նույնականացման եւ փաստաթղթային աշխատանքները։

«Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին» ՀՀ օրենքով՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արգելվում է արտահանել մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքները՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից կամ պատկանելությունից։

Մշակութային այն արժեքները, որոնք գրանցված են կամ ենթակա են գրանցման՝ մշակութային արժեքների պահպանական ցուցակում, ենթակա են արտահանման միայն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը մեկամսյա ժամկետում չի օգտվում դրանց գնման նախապատվության իրավունքից։ Հայաստանի Հանրապետության պետական պահոցներում՝ թանգարաններում, արխիվներում, գրադարաններում մշտապես պահպանվող մշակութային արժեքների արտահանումն արգելվում է՝ բացառությամբ ժամանակավոր արտահանման դեպքերի։

Հայաստանի Հանրապետության տարածքից արգելվում է արտահանել պատմական, գեղարվեստական, գիտական կամ այլ մշակութային նշանակության առարկաներ, որոնք ՀՀ օրենսդրությամբ դասվում են Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության առավել կարեւոր արժեքների շարքում՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից, պետության կողմից պահպանվող առարկաներ, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակութային արժեքների պահպանական ցուցակներում կամ գրանցման մատյաններում են՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից, թանգարաններում, արխիվներում, գրադարաններում, այլ պետական պահոցներում պահպանվող, ինչպես նաեւ ավելի քան հարյուր տարի առաջ ստեղծված մշակութային արժեքներ։

3. ՈՐՆ Է ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մշակութային արժեքները մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաներն ու ստեղծագործություններն են, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարեւոր նշանակություն *(սրբապատկերները, ձեռագիր հուշարձանները, ծիսապաշտամունքային նշանակություն ունեցող առարկաները եւ այլն)։* Մշակութային արժեքները արտահանվում են պարզեցված կարգով՝ առանց արտահանման իրավունքի վկայագրի կամ լիազորված պետական մարմնի կնիքով վավերացված լուսանկարի։ Արտահանման են ենթակա հետեւյալ մշակութային նշանակության առարկաները եւ մշակութային արժեքները՝ մինչեւ հիսուն տարվա վաղեմություն ունեցող՝ կերպարվեստի եւ դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունները *(ներառյալ՝ մշակութային արժեքները), մինչեւ յոթանասունհինգ տարվա վաղեմություն ունեցող մշակութային նշանակության առարկաները)։* Սա չի տարածվում կերպարվեստի եւ դեկորատիվ-կիրառական արվեստի անթվակիր եւ անստորագիր ստեղծագործությունների, ինչպես նաեւ անթվակիր մշակութային նշանակության առարկաների վրա։

Մշակութային նշանակության առարկաները մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաներն են, ներառյալ՝ համարանիշային (սերիական) կամ զանգվածային արտադրության առարկաները, ինչպես նաեւ ստեղծագործությունները, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, մշակութային արժեք չեն ներկայացնում *(հուշանվերներ, արդուզարդի առարկաներ, վերատպություններ, վիմատպություններ, փորագրանկարներ, բացիկներ եւ այլն)։* Մշակութային նշանակության առարկան ազատված չէ հարկերից։

4. ԻՆՉ ԿԱՐԳՈՎ ԵՆ ԱՐՏԱՀԱՆՎՈՒՄ ԱՌԱՆՑ ՏԱՐԵԹՎԻ ՈՒ ԱՌԱՆՑ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԸ

Եթե արվեստի գործի վրա, որը պետք է արտահանվի ՀՀ տարածքից, չկա ստեղծման տարեթիվ եւ հեղինակի ստորագրություն, ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման բաժինն այն ուղարկում է փորձագիտական համապատասխան կենտրոն՝ փորձագիտական եզրակացություն ստանալու համար: Եթե ստորագրությունը բացակայում է, կամ տարեթիվը նշված չէ, դա խոչընդոտ չէ արվեստանմուշի, մշակութային առարկայի արտահանման գործընթացը կազմակերպելու համար:

ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության վարչության մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման բաժինը քաղաքացուն տեղեկացնում է, որ նա կարող է դիմել «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ՝ փորձագիտական եզրակացության համար: Այդ եզրակացությունը հիմք է հանդիսանում արտահանման ձեւակերպման համար:

Իսկ ԿԳՄՍ նախարարության կողմից արվեստանմուշի, կտավի լուսանկարի վրա դրված կնիքի նպատակն այն է, որ քաղաքացին արտերկրի տարանցման գոտում գտնվելիս կարողանա անգլերեն և/կամ ռուսերեն լեզվով ներկայացնել ստացած թույլտվությունը: Օտարալեզու կնիքով լուսանկարը դառնում է լիազոր մարմնից ստացված արտահանման թույլատրական փաստաթուղթ:

5. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ

ԿԳՄՍ նախարարության «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը *(հասցե՝ Երեւան, Կոմիտասի պ. 51 շ., 3-րդ հարկ, հեռ.՝ 011 297113)* պատասխանատու է արվեստի գործերի բնօրինակի եւ կրկնօրինակի վավերացման համար: ՀՀ կառավարության 2005թ. մայիսի 12-ի N630-Ն որոշմամբ սահմանված են մշակութաբանական արվեստաբանական չափորոշիչները: Փորձաքննությունն իրականացնում են լիազորված պետական մարմնի կողմից հավատարմագրված մասնագետները: Փորձաքննությունն իրականացվում է երկու եղանակով՝ պարզ եւ համալիր:

Պարզ փորձաքննությունը մշակութային արժեքի՝ տեսողական ու մասնագիտական գրականության եւ այլ աղբյուրների ուսումնասիրման եղանակով իրականացվող փորձաքննությունն է:

Համալիր փորձաքննությունը մշակութային արժեքի պարզ փորձաքննությամբ եւ տեխնոլոգիական՝ ֆիզիկաքիմիական ու կենսաբանական եղանակով, տեխնիկական միջոցներով իրականացվող փորձաքննությունն է: Համալիր փորձաքննությունն իրականացվում է պարզելու համար հեղինակային ստորագրությունն ու նշումները, դրոշմներն ու կնիքները, կեղծման, վերականգնման հետքերն ու նշանները, ստեղծման վայրի, ժամանակի, հումքի, պատրաստման տեխնոլոգիայի մասին տվյալները:

Մշակութային արժեքի սեփականատերը կամ նրա կողմից լիազորված անձը փորձագիտական եզրակացություն ստանալու համար գրավոր դիմում է փորձաքննություն իրականացնող հավատարմագրված մասնագետին, իսկ վերջինիս՝ իրավաբանական անձի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում՝ իրավաբանական անձին:

Դիմումում նշվում են պատվիրատուի բոլոր տվյալները, իսկ դիմումին կից ներկայացվում է արժեքի 9x12 չափի երկու գունավոր լուսանկար, ինչպես նաեւ արժեքին վերաբերող այլ տեղեկություններ եւ փաստաթղթեր: Փորձաքննություն իրականացնող հավատարմագրված մասնագետի, իսկ վերջինիս՝ իրավաբանական անձի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում՝ իրավաբանական անձի եւ պատվիրատուի միջեւ կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր:

Փորձաքննության առավելագույն ժամկետը սահմանվում է 15 օր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այն կողմերի համաձայնությամբ երկարաձգվում է որոշակի ժամկետով: Փորձագետը կեղծ փորձագիտական եզրակացություն տալու համար կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Փորձաքննության կարող են ենթարկվել գեղանկարը, գծանկարը, փորագրությունը, վիմատպությունը, քանդակը, սրբապատկերը, գեղարվեստական ապակուց եւ կերամիկայից պատրաստված առարկաները, հին ձեռագիր եւ տպագիր գրքերը, հնագիտական հետազոտություններից եւ պեղումներից ստացված գտածոները, լարային, փողային, հարվածային, ստեղնաշարային նվագարանները, դրամները եւ այլն:

6. ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ՝ ԸՍՏ ՓՈՒԼԵՐԻ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

Արվեստի գործերի փաթեթավորումը ծավալուն եւ պատասխանատու աշխատանք է, հատկապես, երբ հարցը վերաբերում է արվեստանմուշներին։ Դա ստիպում է ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենալ գործին։ Ներքին տեղափոխման փաթեթավորումը տարբերվում է միջազգային փոխադրումների համար նախատեսված փաթեթավորումից։ Վերջինս որոշակի առանձնահատկություններ ունի։ Երբ արվեստանմուշները գնում են ժամանակավոր ցուցադրության եւ պետք է վերադառնան, մեկ ուղղությամբ գնալու համար նախատեսված փաթեթավորում է արվում։ Ծրջիկ փոխադրումների համար նախատեսված փաթեթավորումը պետք է լինի բազմակի օգտագործման՝ դեպի ցուցադրության նշանակետ եւ հետադարձ։

Ներքին տեղաշարժի պարագայում ծանր, մեծ, ծավալուն եւ արժեքավոր փաթեթավորման կարիք չկա, հիմնականում արվում է թեթեւ փաթեթավորում։ Խորհուրդ է տրվում օգտագործել շնչող թղթեր, ինչպիսին պերգամենտային թուղթն է, որը փոխադրման ողջ ընթացքում արվեստանմուշները շատ լավ պաշտպանում է խոնավությունից ու փոշուց։ Ցանկալի է, որ պատկան բոլոր մարմինների ու ծառայությունների *(պետական մարմիններ, փոխադրում իրականացնողներ, մաքսային ծառայություն, գնորդ-վաճառող հարաբերություններ եւ այլն)* վերջնական շփումների ու համաձայնության արդյունքում կատարվի փաթեթավորումը, որպեսզի բացառվի կրկնակի

փաթեթավորումը, վերափաթեթավորումը: Նաեւ ցանկալի է, որ փաթեթավորումը բացվի հասցեատիրոջը հասնելուց հետո:

Մշակութային արժեքը, արվեստանմուշը, մշակութային նշանակության առարկան այնպես պետք է փաթեթավորվի, որ իր տուփի/արկղի ներսում անշարժ լինի: Ցուցանմուշների փաթեթավորումը բացելիս պետք է կրել փափուկ ձեռնոցներ *(բամբակյա, տեքստիլ),* որպեսզի նմուշները չվնասվեն, բացառվի մատների դաջումը գործի վրա: Իսկ փաթեթավորման ժամանակ օգտագործվում են սիլիկոնային ձեռնոցներ, որոնք հնարավորություն են ընձեռում զգալ փաթեթավորվող նյութը: Փաթեթավորման համար, բացի կոշտ թղթերից, օգտագործվում է փափուկ թուղթ՝ բրնձաթուղթ: Որպես փաթեթավորման առաջին շերտ՝ օգտագործվում է բրնձաթուղթ, որպեսզի բացառվի ներկի թաց լինելու դեպքում արվեստանմուշի եւ թղթի սոսնձումը միմյանց:

Եթե գործը դուրս է գալիս երկրից, ցանկալի է, որ մաքսային տեսուչը կամ բրոքերը մինչեւ փաթեթավորելը տեսնի այն, որպեսզի հետագայում վերաբացման խնդիր չառաջանա: Մաքսային մարմինների կողմից սահմանված վայրերից եւ ժամերից դուրս մաքսային հսկողության իրականացման դիմումի ձեւը ներկայացնում ենք ստորեւ: Ապահովության համար բոլոր կողմերը լուսանկարում եւ տեսանկարահանում են՝ ֆիքսելու համար գործի վրա եղած հնարավոր վնասվածքները, արվեստանմուշի ֆիզիկական վիճակը: Լուսանկարում է նաեւ փաթեթավորողը: Լուսանկարում պետք է երեւան գործի չափերը, հեղինակի ստորագրությունը, ստեղծման տարեթիվը եւ մնացած բոլոր անհրաժեշտ տվյալները: Ուշադրություն է դարձվում նաեւ ենթաշրջանակի վիճակին:

Դիմումի ձեւ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

.....

.....,

Հայտնում ենք Ձեզ, որ –/–/– ամսաթվի չվերթով պատրաստվում ենք (բեռնագիր, տվյալներ) ՀՀ-ից դեպի———— արտահանել ժամանակավոր ցուցադրման համար նախատեսված արվեստի գործեր՝ նկարներ, գորգեր.....:

Հաշվի առնելով բեռի փաթեթավորման առանձնահատկությունները՝ խնդրում ենք Ձեր թույլտվությունը բեռի մաքսային հսկողության եւ նույնականացման գործողությունները, ինչպես նաեւ բեռի բացթողումը իրականացնել մեր հասցեից՝ ք. Երեւան.....:

Պատրաստ ենք կատարել օրենքով սահմանված բոլոր վճարումները:
Կանխավ շնորհակալություն:
Հարգանքով՝
.....

Բացի մակագրություններից եւ նշումներից՝ փաթեթավորողն ուշադրություն է դարձնում շրջանակի ու կտավի վիճակին, ֆիքսում է ճաքերը, գրառումները: Գործի տվյալները, չափերը գրանցվում են նաեւ փաթեթավորման վրա: Եթե փաթեթավորողը գործ ունի մեծածավալ աշխատանքների հետ, դիտարկում է գործերը շրջանակից հանելու տարբերակը: Կան կտավներ, որոնք, օրինակ, 2x4 մետր չափեր ունեն: Որպես առաջին չափ՝ միշտ նշվում է բարձրությունը, հետո՝ երկարությունը, ինչպես ընդունված է համաշխարհային պրակտիկայում:

Մեծ գործերը հանվում են շրջանակից եւ առանձին գլանաձեւ փաթեթավորվում փողակում (tube): Ինչ վերաբերում է յուղաներկով արված գործերին, դրանք ամուր չպետք է փաթաթել: Հին նկարները պետք է բռնել ենթաշրջանակից եւ ոչ թե շրջանակից, ապակյա մասերը պետք է ամրացնել հատուկ կպչուն ժապավենով (սկոտչով): Քանդակները, կոտրվող առարկաները ցանկալի է տեղափոխել հարմարեցված արկղերով, որոնց մեջ քանդակը, առարկան պետք է լինի անշարժ դիրքով:

Փաթեթավորման համար օգտագործվող նյութերի թվում է օդապղպջակային թաղանթը (bubble cushioning wrap), որն օգտագործվում է շրջանակով նկարների, գրաֆիկական աշխատանքների, քանդակների եւ այլ գործերի փաթեթավորման համար, ինչպես նաեւ ծառայում է որպես ամորտիզացնող նյութ՝ փաթեթի ներսում: Փաթեթավորման ժամանակ օգտագործվում է դիֆուզիոն թաղանթը՝ տայվեկը,

որը կանխում է ջրի եւ գոլորշու թափանցումը, խոնավացումը՝ արվեստի գործերի տեղափոխման ժամանակ, բազմաշերտ ծալքավոր ստվարաթուղթը, պենոպլեքսը, սպունգը, պարալոնային տակդիրը, պապիրուսային թուղթը, որն օգտագործվում է թանգարանային ցուցանմուշները տեղափոխելու, փաթեթավորելու ու պահելու համար: Կիրառվում է նաեւ գրասենյակային թղթի թափոն, որը, բացի ամորտիզացումից, նաեւ կանխում է խոնավացումը:

Օգտակար են պաշտպանիչ կաղապարները՝ շրջանակների անկյունները եւ ցցված մասերը պաշտպանելու համար, արտադրական փրփուրը, ինչպես նաեւ տարբեր չափերի ստվարաթղթե խողովակները՝ տուբերը, որոնք օգտագործվում են արվեստանմուշների, առանց շրջանակի նկարների տեղափոխման համար:

Արտահանվող գործերը, բացի մի քանի շերտ փաթեթավորելուց, տեղադրվում են նրբատախտակե արկղերի մեջ, որոնց վրա պետք լինեն արվեստանմուշի վերաբերյալ համապատասխան նշումներ: Այս պարագայում անհրաժեշտ է ճշտել նշանակետ երկիր ներմուծվող փայտանյութի կամ նրբատախտակի ֆիտոսանիտարական նորմերն ու պահանջող փաստաթղթերը (phytosanitary certificate): Փաթեթավորման համար նախատեսված նյութերի ընտրությունը կախված է գործի չափերից, քաշից, նյութից, փխրունությունից եւ այլ առանձնահատկություններից:





7. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ



Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծման ժամանակ մաքսային հսկողությունն իրականացվում է տվյալ մշակութային արժեքի լուսանկարի առկայության պայմաններում: Լուսանկարին ներկայացվող պահանջները սահմանում է լիազորված պետական մարմինը: Միջազգային պայմանագրերով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետություն ժամանակավոր ներմուծված մշակութային արժեքների նկատմամբ բոլոր վտանգների ֆինանսական ծածկույթն ապահովող պետական երաշխիք տալու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

OPEN
HERE

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄՆԵՐ

Արվեստի գործերի ապահովագրումը փոխադրման գործընթացի անբաժանելի մասն է: Ապահովագրական ընկերությունները ոչ միայն խորհուրդ են տալիս, այլեւ պարտադիր են համարում արվեստի գործերի ապահովագրությունը, քանի որ դրանք գտնվում են տարանցման մեջ: Արվեստի գործերը ապահովագրվում են գողությունից, կորստից, հրդեհից, ջրհեղեղից, բնական աղետներից: Կան բեռների ապահովագրության միջազգային ծածկույթներ, որոնց պարագայում ապահովագրվում է արվեստի գործը՝ փոխադրման բոլոր փուլերից սկսած. բեռնում, փոխադրում, բեռնաթափում, պահպանում եւ տեղադրում: Որպես լրացուցիչ ծածկույթ՝ կարող է լինել նաեւ, օրինակ, ցուցահանդեսի կազմակերպչի ապահովագրությունը, երբ կազմակերպչի բացթողման կամ սխալի հետեւանքով որեւէ վնաս է պատճառվում երրորդ անձանց առողջությանը կամ գույքին:

Պարտադիր պայման է անվտանգության միջոցների պահպանումը՝ տեսաձայնային համակարգերի, անվտանգության աշխատակիցների առկայություն, կարող է լինել նաեւ բեռի ուղեկցողի առկայություն, ինչպես նաեւ ապահովագրական ընկերության համար շատ կարեւոր է պատշաճ փաթեթավորումը: Ապահովագրական ընկերությունների կողմից չեն հատուցվում անբացատրելի կորուստը, առեղծվածային անհետացումը եւ գույքագրումից հետո բացահայտված կորուստը:

Ապահովագրավճարի վրա ազդում է փոխադրվող գույքի արժեքը:

Վերջինս որոշվում է հետեւյալ կերպ. հաճախորդը պայմանագրի կնքման ժամանակ հայտարարագրում է արվեստի գործի արժեքը, որը ապահովագրական ընկերությունը կարող է հիմք ընդունել: Պատահարի ժամանակ ապահովագրական ընկերությունը կարող է պահանջել պարտադիր փաստաթղթային հիմնավորում: Եթե հաճախորդը չի ներկայացնում փաստաթղթային հիմնավորում, ապահովագրական ընկերությունն ինքնուրույն է իրականացնում փորձաքննություն, որոշում տվյալ ապրանքի արժեքը եւ իրականացնում հատուցում:

Ապահովագրավճարը ձեւավորվում է՝ փոխադրվող գործի արժեքի նկատմամբ կիրառելով որոշակի սակագին: Սակագինը կարող է տատանվել 0,1-4%-ի սահմաններում՝ կախված նրանից, թե ինչ է փոխադրվում: Ապահովագրավճարի վրա ազդում է չհատուցվող գումարի առկայությունը: Այսինքն, ինչքան չհատուցվող գումարը մեծ է, այնքան սակագինը ցածր է: Որքան անվտանգության միջոցները, կանոնները պահպանված են, այնքան դա բարենպաստ ազդեցություն է ունենում ապահովագրավճարի վրա: Ամենաապահով փոխադրման միջոցն օդայինն է, ինչը համապատասխանաբար արտացոլվում է արժեքի վրա: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ խոշոր ցուցահանդեսների կազմակերպիչները սովորաբար դիմում են միջազգային ապահովագրական ընկերություններին՝ ռիսկերը նվազեցնելու նպատակով: Թույլատրվող քաշի եւ ծավալի վերաբերյալ հստակ տեղեկատվությունը պետք է ստանալ տվյալ ավիափոխադրողի ներկայացուցչից:

Եթե քաղաքացին ցանկանում է մեծ չափերի արվեստանմուշները կարգոյով տեղափոխել, ապա հավելավճարով կարող է վարձել բրոքեր, որի հետ նախապես պայմանավորվելու դեպքում մաքսային տեսուչը այցելում է արվեստանմուշների գտվելու վայր ու տեղում զննում է ապրանքը: Մեկ միլիոն դրամը գերազանցելու դեպքում քաղաքացին պետք է վճարի նաեւ հինգ հազար դրամ մաքսատուրք: Մաքսային տեսուչի եւ բրոքերի աչքի առաջ ապրանքը փաթեթավորվում է, կապարակնքվում, ապա տարվում է կարգո՝ ուղարկվելու:



Converge

9. ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ, ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒ «ԿԱՆԱՉ» ԵՎ «ԿԱՐՄԻՐ» ՈՒՂԻՆԵՐ, ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԵՐ: ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏՈՒՐՔԵՐԸ

Ապրանքների նկատմամբ մաքսային կարգավորում իրականացնելու նպատակով սահմանվում են մաքսային ընթացակարգերի՝ մաքսային ռեժիմների հետեւյալ տեսակները՝ ներքին սպառման համար բացթողում, արտահանում, մաքսային տարանցում, մաքսային պահեստ, ժամանակավոր ներմուծում (թույլտվությամբ), ժամանակավոր արտահանում, վերաներմուծում, վերաարտահանում եւ այլն։

Սահմանային կետի պարագայում գոյություն ունի ընտրության երկու տարբերակ։ Կանաչ ուղու պարագայում՝ հայտարարագրված ապրանքները զննման ենթակա չեն։ Քաղաքացին կանաչ ուղիով սահմանը հատելիս բանավոր հայտարարում է, որ իր մոտ հայտարարագրման ենթակա ապրանքներ չկան։ Սակայն, եթե այնպես ստացվի, որ նրան զննեն, ու նրա մոտ հայտնաբերվի մշակութային արժեք կամ որեւէ արգելված իր, քաղաքացին խնդիր կունենա։

Կարմիր ուղու դեպքում՝ հայտարարագրված ապրանքները ենթակա են զննման։ Երբ քաղաքացին ընտրում է կարմիր ուղին, բանավոր տեղեկացնում է, որ իր մոտ առկա է հայտարարագրման ենթակա ապրանք։ Այդ դեպքում մաքսային ծառայողը հարցերի միջոցով փորձում է ճշտել, թե իր հետ ինչ ունի քաղաքացին։ Եթե քաղաքացին իր հետ տանում է որեւէ մշակութային արժեք, ցանկալի է, որ անպայման կանգնի կարմիր կետում եւ տեղեկացնի, որ հայտարարագրելու ապրանք ունի ու ցույց տա ապրանքը։ Եթե քաղաքացու մոտ առկա է մշակութային նշանակության առարկա, մաքսավորը հակված է լինում այն ուղարկել փորձաքննության, որպեսզի լիազոր, իրավասու եւ տեղեկացված մարմինը տա համապատասխան եզրակացություն՝ արդյոք այն թույլատրվո՞ւմ է երկրից արտահանել, թե՞ ոչ։ Մաքսավորը արվեստագետ կամ արվեստաբան չէ, նա պարտավոր չէ իմանալ՝ քաղաքացու մոտ եղածը մշակութային արժե՞ք է, թե՞ մշակութային նշանակության առարկա։

Մաքսատուրքը կազմում է ապրանքի մաքսային արժեքի 0%- 25%-ը՝ կախված ապրանքից։



ՀՀ մաքսային տարածքով փոխադրման համար սահմանափակումների ենթակա մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի, արխիվային բնօրինակ փաստաթղթերի ցանկում են՝ ԵԱՏՄ անդամ պետությունների թանգարանային, արխիվային եւ գրադարանային ֆոնդերի կազմում գտնվող մշակութային արժեքները, առարկաները եւ հավաքածուները, որոնք ունեն պատմական, գիտական, գեղարվեստական կամ այլ մշակութային արժեք, կապված են ժողովուրդների կյանքում տեղի ունեցած նշանակալից իրադարձությունների, պետության եւ հասարակության զարգացման, գիտության եւ տեխնիկայի պատմության հետ, հուշային առարկաները, որոնք առնչվում են ականավոր քաղաքական, պետական գործիչների, ազգային հերոսների, գիտության, գրականության եւ արվեստի գործիչների կյանքին, համազգեստի եւ հանդերձանքի առարկաներն ու հավաքածուները՝ ռազմական, արտադրական եւ այլ նշանակության, ավելի քան հարյուր տարի առաջ ստեղծված, ինչպես նաեւ հրազենային զենքերը, որոնք արտադրված են 1900-1945թթ. ժամանակահատվածում:

Ինչ վերաբերում է սառը զենքին, այն պետք է արտադրված լինի հիսուն եւ ավելի տարի առաջ, հնաոճ զենքը՝ հրազենը, պետք է ստեղծված լինի մինչեւ 1899թ. ավարտը, տպագիր հրատարակությունները պետք է ունենան ավելի քան հարյուր տարվա վաղեմություն, արխիվային փաստաթղթերը՝ ստեղծված լինեն հիսուն եւ ավելի տարի առաջ:

Ըստ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման՝ «Մշակութային արժեքները, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերը եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու մասին» հիմնադրույթին համապատասխան են արտահանվում:

10. ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Ի՞նչ է արգելվում արտահանել:

ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 13-ի N1643-Ն որոշմամբ սահմանվել է ՀՀ մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքների ցանկը: Ըստ այդմ՝ արգելվում է արտահանել, օրինակ, Լճաշենի քառանիվ կամարակապ ծածկով ՔԱ 15-րդ դարի կառքը, Էրեբունի ամրոցի սեպագիր արձանագրությունը (ՔԱ 782թ.), Ճաշոց Ավետարանը (1286թ.), Մշո Առաքելոց վանքի դուռը (1134թ.), Լազարյան Ավետարանը (887թ.) եւ այլն:

Ի՞նչ կլինի, եթե քաղաքացին գողացված մշակութային արժեքը ներկայացնի փորձաքննության:

Եթե փորձաքննության արդյունքում բացահայտվի, որ մշակութային արժեքը գողացված է կամ գտնվում է հետախուզման մեջ, փորձաքննություն իրականացնող հավատարմագրված մասնագետը, իսկ վերջինիս՝ իրավաբանական անձի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում՝ իրավաբանական անձը, դրա մասին տեղյակ կպահի իրավապահ մարմիններին:

Ո՞ր դեպքում անհատը, ստեղծագործողը, կազմակերպությունը խնդիր կունենա մաքսային մարմնի հետ:

Քաղաքացին մաքսային մարմնի հետ խնդիրներ կունենա, եթե փորձի շրջանցելով անցնել մաքսային հսկողությունը, ընդ որում, անկախ նրանից, դա դիտավորություն է, թե անզգուշություն: Օրինակ, քաղաքացին խնդիրներ կունենա, եթե արխիվային փաստաթուղթ, հարյուր եւ ավելի տարվա վաղեմության թղթադրամ կամ մետաղադրամ ունենա իր հետ, բայց փորձի մաքսային հսկողությունը շրջանցել եւ սահմանը հատել կանաչ ուղիով, ու մաքսային ծառայողները նման ապրանքներ հայտնաբերեն իր մոտ:

Ի՞նչ պետք է անի քաղաքացին, եթե ձեռք է բերել արվեստի բացառիկ նմուշ եւ ցանկանում է Հայաստան ներմուծել:

Որեւէ աճուրդից ձեռք բերված, գնված արվեստի բացառիկ նմուշը Հայաստան բերելու դեպքում ԿԳՄՍ նախարարության փորձագիտական ՊՈԱԿ-ը տալիս է համապատասխան եզրակացություն, որ դա իսկապես մշակութային արժեք է, եւ այդ հիմքով հայտարարագիր լրացնելիս դա ձեւակերպում են որպես մշակութային արժեք:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով եւ մաքսային օրենսգրքով՝ մշակութային արժեքներն ազատված են հարկերից: Մշակութային արժեքների վրա զրո տոկոս մաքսատուրք է գործում, հարկային օրենսգրքով դրանք ԱԱՀ-ից եւս ազատված են: Եթե քաղաքացին

ձեռք է բերել գերթանկ մշակութային արժեք, մինչեւ փորձագետի համապատասխան եզրակացությունը ստանալը այն պահպանվում է օդանավակայանի գերթանկ ապրանքների հատուկ պահպանման զրահապատ պահատուփում, ինչի համար գոյություն ունի լրավճար:

Փորձագիտական կենտրոնը փորձաքննության համար հինգ հազար դրամ պետական տուրք է գանձում քաղաքացուց, իսկ եթե մեկ միլիոն դրամից անցում է արտահանումը, հարկվում է չորս հազար հինգ հարյուր դրամ: Եթե քաղաքացին համապատասխան գիտելիքներ չունի անհրաժեշտ ձեւակերպումներն իրականացնելու համար, կարող է դիմել մաքսային միջնորդի (բրոքերի) ծառայությանը: Մաքսային միջնորդը լիցենզավորվում է մաքսային մարմնի կողմից, սակայն չի ենթարկվում մաքսային մարմնին եւ ինքուրույն է որոշում իր ծառայության սակագները:

Եթե նկարիչը ցուցահանդեսի նկարներ է տանում, որոնց մի մասն արտահանման պահին անավարտ է, սակայն վերադարձին արդեն ավարտած է լինելու, ինչպե՞ս պետք է վարվի:

Եթե քաղաքացին, նկարիչը մեկ նկարի արտահանման թույլատվություն է ստացել ԿԳՄՍ նախարարությունից եւ զգուշացրել, որ այդ պահին ցուցահանդես տարվող նկարների շարքն անավարտ է, քանի որ տեղում պետք է աշխատի, ուրեմն պետք է ժամանակավոր արտահանում ձեւակերպի՝ վերամշակման համար: Ժամանակավոր արտահանումն ու ժամանակավոր ներմուծումը թույլատրելի են մի պայմանով, որ վերադարձին կամ վերաարտահանման, վերաձեւակերպման պահին տվյալ ապրանքը պետք է նույնականացվի: Եթե քաղաքացին ժամանակավոր արտահանում է ձեւակերպում եւ վերադառնալիս որոշ գործեր հետ չի բերում, ապա այստեղ պետք է կրկին վերաներմուծի հետ բերված գործերը, իսկ այնտեղ թողածների համար ձեւակերպի արտահանում՝ ազատ շրջանառության համար: Այս ամենն անելու համար նա պետք է օգտվի մաքսային միջնորդի ծառայությունից, որը վճարովի է:

ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի N1348-Ա որոշմամբ հաստատված հատուկ ցանկում ո՞ր հեղինակներն են ընդգրկված, որոնց ստեղծագործությունները կարող են Հայաստանի Հանրապետությունից արտահանվել միայն մշակութային արժեքների արտահանման իրավունքի կամ ժամանակավոր արտահանման վկայագրի հիման վրա:

Վերջին հիսուն տարում մահացած հեղինակների ցանկում, որոնց ստեղծագործությունները կարող են Հայաստանի Հանրապետությունից արտահանվել միայն մշակութային արժեքների արտահանման իրավունքի կամ ժամանակավոր արտահանման վկայագրի հիման վրա, ներառված են հետեւյալ արվեստագետների անունները.

1. Աբեղյան Միեր (1909-1994) գեղանկարիչ
2. Ավետիսյան Մինաս (1928-1975) գեղանկարիչ
3. Բաժբեուկ-Մելիքյան Ալեքսանդր (1891-1966) գեղանկարիչ
4. Բերբերյան Արծրուն (1925-1994) արծաթագործ
5. Բեքարյան Արա (1913-1986) գեղանկարիչ
6. Գալստյան Վրույր (1924-1996) գեղանկարիչ
7. Գառզու (1907-2000) գեղանկարիչ
8. Գայֆեճյան Վահրամ (1879-1960) գեղանկարիչ
9. Գյուրջյան Գաբրիել (1892-1987) գեղանկարիչ
10. Զարդարյան Հովհաննես (1918-1992) գեղանկարիչ
11. Էլիբեկյան Վաղարշակ (1911-1994) գեղանկարիչ
12. Խաթլամաջյան Սեյրան (1937-1994) գեղանկարիչ
13. Խանջյան Գրիգոր (1926-2000) գեղանկարիչ
14. Կալենց /Գալենց/ Հարություն (1910-1967) գեղանկարիչ
15. Կարալյան /Կարալով/ Հովսեփ (1897-1981) գեղանկարիչ
16. Կոջոյան Հակոբ (1883-1959) գեղանկարիչ
17. Կոնտուրաջյան Պետրոս (1905-1956) գեղանկարիչ
18. Հարությունյան Արա (1928-1999) քանդակագործ
19. Հովհաննիսյան Աշոտ (1929-1997) գեղանկարիչ
20. Նալբանդյան Դմիտրի (1906-1994) գեղանկարիչ
21. Ծահմուրադյան Վարոս (1940-1977) գեղանկարիչ
22. Պետրոսյան Բենիկ (1924-1993) քանդակագործ
23. Ռաշմաճյան Սեդրակ (1907-1978) գեղանկարիչ
24. Սարգսյան Արա (1902-1969) քանդակագործ
25. Սարյան Մարտիրոս (1880-1972) գեղանկարիչ
26. Սիմոնյան Հռիփսիմե (1916-1998) խեցեգործ
27. Քոչար Երվանդ (1899-1979) գեղանկարիչ, քանդակագործ
28. Փարաջանով Սերգեյ (1924-1990) կոլաժիստ

11. ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ցանկանում ես արտահանե՞լ արվեստի գործ

‹50

Արվեստի գործը մինչեւ 50 տարեկան է*

50‹

Արվեստի գործը 50 եւ ավելի տարվա վաղեմություն ունի

1

1

Գործերը ներկայացվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության վարչության մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման բաժին՝ համապատասխան փաստաթղթերի ուղեկցությամբ

2

Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն

3

Արտահանման թույլտվություն՝ ԿԳՄՍ նախարարության կողմից

2

4

Մաքսային ձեւակերպում
(մաքսային հսկողությունը հնարավոր է իրականացնել նաեւ մաքսային մարմինների կողմից սահմանված վայրերից եւ ժամերից դուրս)

3

5

Ապահովագրություն
(հնարավոր է նաեւ իրականացնել հեռակա՝ համապատասխան մասնագետին հրավիրելով տվյալ տարածք)

4

Արվեստի գործերի պատշաճ փաթեթավորում

6

Արտահանում

* Բացառությամբ հատուկ ցանկում ներգրավված հեղինակների գործերից

12. ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

1. ՀՀ կառավարության 2005թ. մայիսի 12-ի N 630-Ն որոշումը մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության անցկացման կարգը եւ չափորոշիչները հաստատելու մասին՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=29884

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2023թ. հունվարի 13-ի հրամանը փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2023թ. պետական պատվերի մասին՝ https://www.src.am/storage/menu_contents_227/hr_hhpekn_2023-20L_64647ea672171.pdf

3. ՀՀ մաքսային օրենսդրություն՝ https://src.am/am/getMenusContents/47

4. ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքի այն բաժինը, որտեղ զետեղված են մշակույթի ոլորտին վերաբերող համապատասխան միջազգային կոնվենցիաները, կառավարության որոշումները եւ նախարարի հրամանները՝ https://escs.am/am/static/agency-cultural-preservation?s=culture

5. «Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2004թ. դեկտեմբերի 6-ին https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64635

6. ՀՀ կառավարության 2004թ. փետրվարի 25-ի N245-Ն որոշումը մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արտահանումը կարգավորելու մասին՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/250/

7. «Թանգարանների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2024թ. փետրվարի 28-ին՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191085

8. ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 13-ի N1643-Ն որոշումը ՀՀ մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքների ցանկը սահմանելու մասին՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=3183

9. Մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր իրերի ցանկը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=14536

13. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐ

* «Լիգա ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ

Հասցե՝ Հայաստան, Երեւան, Հյուսիսային պողոտա 1,
տարածքներ 8, 9, 10
Հեռ.՝+374 12 888888
Էլ. հասցե՝info@ligainsurance.am
www.liga.am
Լիցենզիայի համար՝ ԱՊՈ 0009, տրամադրման ամսաթիվ՝
05.20.2008

«Նաիրի ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ

Հասցե՝ Հայաստան, Երեւան, Ավետ Ավետիսյան փող. 116/1, 116/5
Հեռ.՝+374 60 500060, +374 98 277277
Էլ. հասցե՝ nairi@nairi-insurance.am
www.imnairi.am
Լիցենզիայի համար՝ ԱՊՈ0006, տրամադրման ամսաթիվ՝ 3.28.2008

«Էֆես» ապահովագրական ՓԲԸ

Հասցե՝ Հայաստան, Երեւան, Արաբկիր, Հրաչյա Քոչարի փողոց 35/1
Հեռ.՝ +374 10 700800
Էլ. հասցե՝ info@efes.am
www.efes.am
Լիցենզիայի համար՝ ԱՊՈ0012 եւ ԱՊՎ0005, տրամադրման
ամսաթիվ՝ 25.07.2023

* Ներկայացվում է դաշտում համապատասխան փորձառություն ունեցող կազմակերպությունների ցանկը

14. ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՂՆԵՐ



*** «Արկանել» ՍՊԸ**
Հասցե՝ Հայաստան, 0033, Երեւան, Հրաչյա Քոչարի փող., 10/98 շենք
Հեռ.՝ +374 91 402961, +374 10 275385
Էլ. հասցե՝ arkanelkaren@gmail.com
www.arkanel.com

Buy Armenian («ԱԵՔՍ» ՍՊԸ)
Հասցե՝ Հայաստան, Երեւան, Կորյունի փող., 13/10 շենք
USA, 3728 San Fernando Road, Glendale, CA 91204
Հեռ.՝ +374 41 155881
Էլ. հասցե՝ info@buyarmenian.com
www.buyarmenian.com

«ԴԻ-ԷՅՉ-ԷԼ Վորլդվայդ Էքսպրես», ներկայացուցչություն Հայաստանում
Հասցե՝ Հայաստան, 0002, Երեւան, Ամիրյան փող., 27 շենք
Հեռ.՝ +374 44 586688, 8822
Էլ. հասցե՝ hunan.asatryan@dhl.com
www.dhl.com

«Հայփոստ» ՓԲԸ
Հասցե՝ Հայաստան, 0002, Երեւան, Սարյան փող., 22 շենք
Հեռ.՝ +374 10 514514
Էլ. հասցե՝ info@haypost.am
www.haypost.am
www.berber.am

«Օնէքս» արագ առաքման ծառայություն
Հասցե՝ Հայաստան, 0009, Երեւան
Տերյան փող., 105/1 շենք, 1-ին եւ 2-րդ հարկեր
Հեռ.՝ +374 60 750350
Էլ. հասցե՝ export@onex.am
www.onex.am

«Ֆեդերալ Էքսպրես» («ՖԵԴԷՔՍ»)
Հասցե՝ Հայաստան, 0002, Երեւան, Մաշտոցի պող., 40 շենք
Հեռ.՝ +374 60 657070, +374 10 544988, +374 10 544277
Էլ. հասցե՝ info@transimpex.am
www.transimpex.am

* Ներկայացվում է դաշտում համապատասխան փորձառություն ունեցող կազմակերպությունների ցանկը

15. ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

(ՄԻՋՆՈՐԴՆԵՐ/ԲՐՈՔԵՐՆԵՐ)

*** «Աբառռ» ՍՊԸ**

Հասցե՝ Հայաստան, 0042, Երեւան, «Զվարթնոց» օդանավակայան, բեռնահամալիր
Հեռ.՝ +374 93 253300
Ծովակալ Իսակովի պող., 10 շենք
Հեռ.՝ +374 93 253300, +374 93 253300 (Viber), +374 93 253300 (WhatsApp)

«Անիտա Սթար» մաքսային բրոքերային գրասենյակ ՍՊԸ

Հասցե՝ Հայաստան, 0082, Երեւան, Ծովակալ Իսակովի պող., 10 շենք
Հեռ.՝ +374 44 750020 (նաեւ Viber, WhatsApp, Telegram), +374 41 886020

«Բի Էֆ Տրանս» միջազգային բեռնափոխադրումների ընկերություն մաքսային գրասենյակ ՍՊԸ

Հասցե՝ Հայաստան, 0064, Երեւան, Առնո Բաբաջանյան փող., 19 շենք, տարածք 44
Հեռ.՝ +374 33 300600, +374 55 330040, +374 98 334640
Էլ. հասցե՝ bftrans19@mail.ru
www.bftrans.am

«Բրոկերս» ՍՊԸ

Հասցե՝ Հայաստան, Երեւան, Անտառային փող., 135 շենք
Հեռ.՝ +374 11 301301
Էլ. հասցե՝ info@brokers.am
www.brokers.am

«Գրին Վեյ Լոջիսթիք» ՍՊԸ

Հասցե՝ Հայաստան, 0025, Երեւան, Իսահակյան փող., 18 շենք, 4-րդ հարկ
Հեռ.՝ +374 77 479393, +374 91 012393(նաեւ Viber), artrans.jenny (Skype)

«Մաստեր Բրոկ» ՍՊԸ

Հասցե՝ Հայաստան, 1129, Արմավիրի մարզ, Թաիրով գյուղ, Դեմիրճյան թաղամաս, 9-րդ փողոց, տուն 2
Հեռ.՝ +374 33 400502, +374 33 400501, +374 33 400503
Էլ. հասցե՝ masterbrokllc@gmail.com

«ՍՅՄՌ» ՍՊԸ

Հասցե՝ Հայաստան, Երեւան, Բաղյան 1, բն.15
Հեռ.՝ +374 44 920222
Էլ. հասցե՝ s3mr.llc@mail.ru

* Ներկայացվում է դաշտում համապատասխան փորձառություն ունեցող կազմակերպությունների ցանկը

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ.

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ



Ձեռնարկի այս հատվածում ներկայացվում է, թե ինչ հրատապ եւ փոխկապակցված գործողություններ են ձեռնարկվում վտանգված նյութական եւ ոչ նյութական մշակութային ժառանգությանն ուղղված ռիսկերը կայունացնելու ու նվազեցնելու համար՝ նպատակ ունենալով նպաստել դրանց վերականգնմանը: Դաշտային պայմաններում ստուգված, չորս քայլից բաղկացած ընթացակարգի միջոցով սահմանվում է, թե երբ եւ ինչպես պաշտպանել վտանգված մշակութային ժառանգությունը, նշվում է, թե ովքեր կարող են աջակցություն ցուցաբերել նման գործողությունների ժամանակ: Ներկայացվող քայլերն ու աշխատանքային ընթացակարգերը կարող են հարմարեցվել տարբեր արտակարգ իրավիճակներին ու դրանց կոնկրետ համատեքստին:

Առաջին օգնությունը անսպասելի վնաս կրած մշակութային ժառանգության որեւէ արժեքին տրամադրված օգնությունն է: Այն ներառում է նախնական գործողություններ, որոնք ձեռնարկվում են վնասված մշակութային ժառանգությունը փաստագրելու, պահպանելու, փրկելու եւ կայունացնելու համար՝ մինչեւ մասնագիտացված օգնության հասանելի դառնալը: Այն կանխում է վիճակի վատթարացումը եւ նպաստում է վերականգնմանը:

Արտակարգ իրավիճակների/աղետների ժամանակ առաջին օգնության ծրագիր. Արձագանքման ընթացակարգ

ՔԱՅԼ 1. ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՔԱՅԼ 2. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

ՔԱՅԼ 3. ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՅԼ 4. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ժամանակ

Նախ՝ գնահատում ենք, թե ինչքան ժամանակ ունենք։
Արդյոք դա մինչ ճգնաժամն է, թե՞ աշխատում ենք ճգնաժամի ընթացքում։
Պետք է հաշվարկել մեր ունեցած ժամանակը եւ ժամանակացույց կազմել մեր կողմից ձեռնարկվելիք գործողությունների համար։

Անվտանգություն

- Պետք է գնահատել շենքի անվտանգությունը եւ այն, թե շենքի որ հատվածն է անվտանգ։
- Պետք է իմանալ, թե որն է շենքում գտնվող առարկաները տեղափոխելու եւ տեղավորելու ամենաանվտանգ վայրը։
- Պետք է գտնել անվտանգ աշխատանքային տարածք, որտեղ թիմը կարող է աշխատել եւ կատարել առաջին օգնության աշխատանքները։ Համատեղ աշխատելու դեպքում թիմի բոլոր անդամները պետք է ճանաչեն միմյանց, թիմի անդամներից որեւէ մեկի մեկուսացված աշխատանքն անթույլատրելի է։

Թանգարանի կարողությունները

Ի՞նչ կարողությունների ենք տիրապետում։ Կարո՞ղ է, արդյոք, թանգարանի շենքը դիմակայել կոնկրետ ռիսկին։ Ինչպիսի՞ն են շենքի ներսում մեր ունեցած լոգիստիկայի, պատրաստվածության կարողությունները։ Ովքե՞ր են շահագրգիռ կողմերը, որոնք կարող են ավելի մեծ կարողություններ եւ ավելի շատ կայունություն ապահովել մեր թանգարանի համար։

Սպառնալիք/ռիսկ

Արդյո՞ք կա ռիսկ, որ մեր թանգարանը կթիրախավորվի։
Որքա՞ն ժամանակ կարող է թանգարանը դիմակայել այդ սպառնալիքին/ռիսկին։
Այս ամենի գնահատման ընթացքում պետք է կազմել հատակագիծ, նշել, թե որ գոտում է գտնվում թանգարանը, կազմել թանգարանի գտնվելու վայրի եւ դրա հատակագծի նախագիծը, նշել հավաքածուի նմուշների քանակը։ Կարեւոր է լուսանկարել, կատարել գրառումներ, գնահատել նմուշների քանակը, չափագրել տեղանքը, կազմել գնահատման թերթիկ (ստանդարտ գնահատման թերթիկ, որը տրամադրվում է ԻԿՕՄ-Հայաստանի կողմից)։

2. ՍԱՀՄԱՆՈՒՄ

Առաջնահերթությունների ցանկ

Նախ՝ նույնականացնում ենք հավաքածուի նմուշերի առաջնահերթությունների ցանկը՝ կախված նմուշի **արժեքից, նյութից, չափերից** եւ **այն կարգավորելու մեր կարողությունից**:
Որոշ նյութեր կարող են ավելի վնասված լինել՝ վտանգի տեսակով պայմանավորված:
Ռմբակոծության դեպքում առաջինը պետք է տեղափոխել փխրուն առարկաները:
Վանդալիզմի ռիսկի դեպքում պետք է մտածել, թե ինչը կարող են առաջին հերթին գողանալ:
Առաջնահերթությունների ցանկն օգնում է ավելի շատ առարկաներ փրկել, հեշտացնում է առարկաների տեղափոխումը, տարհանումը եւ դրանց տեղակայումն անվտանգ պահեստում:

Շահագրգիռ կողմեր

Երկրորդ հերթին՝ կազմում ենք շահագրգիռ կողմերի ցուցակը: Ովքե՞ր կարող են օգնել մեզ:
Ունե՞նք կամավորներ: Արդյո՞ք կան հաստատություններ, որոնք կարող են աջակցել մեզ՝ մատակարարելով աշխատուժ կամ միջոցներ:

Անվտանգ պահեստ + անվտանգ ճանապարհներ

Երրորդ հերթին՝ որոշում ենք, թե որտեղ ենք տեղադրելու մեր հավաքածուները: Եթե հավաքածուն տեղափոխում ենք մինչեւ հնարավոր ճգնաժամը, ապա պետք է ստանանք որոշ թույլտվություններ, ունենանք կողոպուտից եւ բնական աղետներից պաշտպանված պահեստ:
Նախքան որեւէ բան տեղափոխելը պետք է հստակ իմանալ, թե ուր ենք տեղափոխելու: Որտե՞ղ է անվտանգ պահեստը: Պետք է գնալ անվտանգ պահեստ, գնահատել անվտանգության մակարդակը, նկարել պահեստի գտնվելու վայրը: Պետք է իմանալ, թե ինչպես ենք հասնելու այդ պահեստին, ինչ ճանապարհով ենք անցնելու, եւ համոզվել, որ այդ ճանապարհներն իսկապես ապահով են: Կարող ենք պարզել նաեւ այնտեղ հասնելու եւ հավաքածուն տեղափոխելու կարճ երթուղիները:
Անհրաժեշտ է նկարել անվտանգ պահեստի, թանգարանային շենքերի բազային հատակագծերը՝ արտակարգ իրավիճակների դեպքում նմուշների տեղափոխման ամենաարդյունավետ ուղիները պարզելու համար:

3. ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Առաջնահերթությունների ցանկ

Առաջնահերթությունների ցանկը կախված է ստորեւ թվարկված բնորոշիչներից՝

- Ժամանակ
- Ռիսկ
- Արժեք (սոցիալական, կրոնական, պատմական, համակարգային)
- Կարողություն
- Յուրաքանչյուր նմուշի թույլ կետ
- Վնասի մակարդակը. առաջնահերթություն է նախ լավ պահպանված նմուշները փրկելը, քանի որ թողնելու դեպքում դրանք նույնպես կարող են վնասվել
- Նյութի փխրունությունը. նախ տեղափոխում ենք փխրուն նյութերից պատրաստված նմուշները
- Ռիսկերով պայմանավորված գործողություններ. հրդեհի դեպքում նախ հավաքում ենք արխիվները, ծղոտե, փայտե իրերը, այն ամենը, ինչը կարող է այրվել ու վնասվել։

Կարեւոր է առաջնահերթությունների ցանկը կազմել ըստ նմուշի արժեքի (համայնքի համար), նյութի փխրունության, պատճառված վնասի աստիճանի, փաթեթավորման համար պահանջվող ժամանակի եւ ռեսուրսների։

Տրանսպորտային միջոցների ցանկ

Ինչպե՞ս ենք տեղափոխվելու մի հաստատությունից մյուսը։ Որտեղից ուր ենք շարժվելու։

Քարտեզ

Թիմի աշխատանքային տարածքի գծագրում։

Թիմերի անդամների ցուցակ

Մարդիկ, որոնք աշխատելու են արտակարգ իրավիճակների ժամանակ։

- **Լոգիստիկ թիմ**

Մատակարարումը շատ կարեւոր է. պետք աշխատանքներում ներգրավված լինեն 1-2 անձ, որոնք պատասխանատու կլինեն սննդի, ջրի, տրանսպորտի, նյութերի մատակարարման ու տեղում գործիքակազմի կառավարման համար։ Սա ամենակարեւոր թիմերից մեկն է, որը պետք է աշխատի ըստ մեր պատրաստած նյութերի ցանկի։

- **Առբերման թիմ (Retrieval team)**

Երբ վտանգն արդեն իսկ առկա է, այս թիմը ստեղծում է նմուշների ընտրման եւ դրանց դասակարգման համակարգ՝ որոշելով, թե որ նմուշն է վնասված ու պետք է փոխանցվի կայունացման թիմին, որ նմուշն է լավ վիճակում ու պետք է փոխանցվի փաթեթավորման թիմին՝ անմիջապես տեղափոխվելով պահեստ։

Սպասվող վտանգի դեպքում այս թիմն աշխատում է մեր կազմած առաջնահերթությունների ցանկով, որի հիման վրա դասակարգում ու պատրաստում է տեղափոխվելիք հավաքածուն։

- **Փաստագրման թիմ**

Փաստագրման թիմը շատ կարեւոր է, այն համատեղ աշխատում է մյուս բոլոր թիմերի հետ։ Այս թիմի անդամներից մեկն աշխատում է առբերման թիմի հետ, քանի որ, նախքան նմուշների փոխանցումը կայունացման կամ փաթեթավորման թիմին, ամեն նմուշի համար նա պիտի ստեղծի նույնականացման պիտակ։

Իսկ թիմի մեկ այլ անդամ պետք է աշխատի ժամանակավոր պահեստում, քանի որ նա նույնականացնում է յուրաքանչյուր նմուշ։

Այս թիմը պատասխանատու է յուրաքանչյուր նմուշի նույնականացնող պիտակավորման, բոլոր նմուշների արագ գույքագրման համար՝ այն պահից սկսած, երբ դրանք սկզբնական վայրից տեղափոխվում են կայունացման/փաթեթավորման թիմ, այնուհետեւ՝ ժամանակավոր պահեստ։

Վերջնական փաստաթուղթն իրենից ներկայացնում է գույքացուցակի թերթիկ՝ հավաքագրված նմուշների նույնականացման համարներով, դրանցից յուրաքանչյուրին ցուցաբերված խնամքի ու ժամանակավոր պահեստում յուրաքանչյուր նմուշի գտնվելու վայրի մասին տեղեկություններով։

- **Կայունացման թիմ**

Կայունացման թիմն աշխատում է այրված, թրջված, կեղտոտված կամ կոտրված նմուշների հետ։ Եթե անգամ թիմի անդամը վերականգնող է, չպետք է փորձի անմիջապես վերականգնել նմուշը, այլ պետք է ավելի շուտ կայունացնի տվյալ նմուշի վիճակը։ Այստեղ առաջին օգնություն ենք ցուցաբերում եւ ժամանակ խնայում ավելի շատ առարկաներ փրկելու համար։ Կարեւոր է հաշվարկել կայունացման վրա ծախսված ժամանակը եւ նկատի ունենալ, որ կանխարգելիչ միջամտություն ենք անում փոքր քայլերով։

- **Փաթեթավորման թիմ**

Այնուհետեւ նմուշները փոխանցվում են փաթեթավորման թիմին: Փաթեթավորելիս պետք է մտածել ցնցումների, տատանումների, սթրեսի, լարվածության եւ կլիմայի հետեւանքով հնարավոր վնասը կանխելու մասին: Պետք է հաշվի առնել, որ փաթեթները կարող են ժամանակավոր պահեստում մնալ նախատեսվածից ավելի երկար ժամանակով:

- **Տեղափոխման թիմ**

Նմուշներն իրենց գտնվելու սկզբնական վայրից ֆիզիկապես տեղափոխվում են ժամանակավոր պահեստ:

Անհրաժեշտ նյութերի ցանկ

Նյութերի ցանկը կազմելիս պետք է հաշվի առնել հավաքածուի առանձնահատկությունները, արժեքների ցուցակը:

- Միջոցներ՝ թիմի անվտանգության համար. սաղավարտ, բաճկոն, ձեռնոցներ, կոշիկներ, դիմակներ (եթե աշխատելու ենք, օրինակ՝ ռմբակոծությունից, պայթյունից հետո),
- փաստագրմանը վերաբերող միջոցներ՝ տեսախցիկ, թուղթ, ջրհեղեղի դեպքում՝ անջրանցիկ թղթեր, պիտակներ, պարաններ, ժապավեններ,
- նմուշների փաթեթավորման եւ պահպանության համար անհրաժեշտ նյութեր՝ հավաքածուի արդեն իսկ վնասված լինելու դեպքում՝ սպունգ, վրձիններ, սրբիչներ, մուսլինե գործվածքներ, իսկ եթե խոսքը օրգանական հավաքածուների մասին է՝ գործվածքներ, տեքստիլ եւ ծղոտե իրեր,
- նմուշների փաթեթավորման եւ ժամանակավոր պահեստում տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ. նմուշներն անմիջականորեն հատակին չենք դնում, այլ տեղավորում ենք փայտյա հարթակների վրա: Անհրաժեշտ են նաեւ տարբեր տեսակի տուփեր՝ կախված նմուշների չափերից: Ցանկալի է պահեստում ունենալ դարակաշարեր: Փաթեթավորման համար անհրաժեշտ կլինեն նաեւ օդապղպջակային թաղանթ (bubble cushioning wrap), մուսլինե սավաններ, թղթեր, կպչուն (ziplock) տոպրակներ՝ փոքր առարկաների տեղադրման համար:

Թեեւ խոսքը ժամանակավոր պահեստավորման մասին է, սակայն պետք է մտածել նաեւ այն սցենարի մասին, որ հնարավոր է կարիք լինի նմուշներն ավելի երկար ժամանակով պահել այնտեղ: Դրա համար պետք է հաշվի առնել, թե փաթեթավորման համար որ նյութերը կհամապատասխանեն մեր ունեցած նմուշների պահպանմանը:

ՆՅՈՒԹԵՐ



ՄՈՒՍԼԻՆ

ՕԴԱՊՂՊՋԱԿԱՅԻՆ ԹԱՂԱՆԹ
(BUBBLE CUSHIONING WRAP)



ՓՐՓՐԱՊԼԱՍՏ

ԴԱՏԱՐԿ ԹԵՐԹԵՐ

ԿՊՉՈՒՆ
ՏՈՊՐԱԿՆԵՐ

4. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Փրկում

Ոչ ոք չի դիպչում նմուշներին՝ առանց տեղեկանալու, թե ինչպես տեղաշարժել կամ վարվել դրանց հետ։ Եթե վտանգն արդեն տեղի է ունեցել, պետք է փաստագրել տեղափոխվելիք նմուշների թիվը քարտեզի (էսքիզի) կամ մեր պատրաստած հատակագծի վրա՝ նշելով, թե որտեղից ենք վերցրել տվյալ նմուշը։ Քարտեզի վրա կարող ենք նմուշները տեղակայել **ցանցային համակարգի** միջոցով. պատկերացրեք այն որպես տիպային աղյուսակ՝ այբբենական կարգով դասավորված սյունակներով ու թվային կարգով դասավորված տողերով։ Նշում ենք յուրաքանչյուր նմուշի տեղը՝ տառով եւ թվով։ Երբ առբերման թիմի անդամը վերցնում է նմուշն ու դնում այն սկուտեղի կամ տուփի մեջ՝ տեղափոխելու նպատակով, պետք է սկուտեղի/տուփի վրա գրի նաեւ ցանցի համարը։ Շատ կարեւոր է, թե ինչպես ենք վարվում նմուշների հետ։ Դրանք հարկավոր է տանել երկու ձեռքով բռնած՝ գտնելով հավասարակշռության կենտրոնը, այսինքն այնպես, ինչպես վարվում են երեխայի հետ։ Եթե նմուշը չափազանց ծանր է, չպետք է միայնակ տանել, այլ անհրաժեշտ է խնդրել, որ թիմի մյուս անդամներն օգնեն։

Փաստագրում

Նույնականացման համարը այն նմուշի գրանցված համարն է, որն արդեն մեզ մոտ է։ Այնուհետեւ գրանցում ենք նմուշի տեսակը (գոբելեն, քանդակ, տեքստիլ, խեցեղեն եւ այլն), չափերը (քաշ, բարձրություն, լայնություն), եթե չափման սարքեր չունենք, կարող ենք գրել ծանր/միջին/թեթեւ քաշ։ Նմուշների նույնականացման պիտակները կազմելուց հետո գույքագրման թերթիկում գրանցում ենք նույնականացման բոլոր համարները։ Նմուշի նույնականացման պիտակների համար ունենք ձեւանմուշների օրինակներ, որտեղ լրացնում եք տեղեկատվությունը, կարող եք տեղադրել նաեւ նմուշի լուսանկարը/նկարը։ Նույնականացման տվյալները պատրաստող փաստագրման թիմին խորհուրդ է տրվում միեւնույն նմուշը բազմաթիվ անգամներ չլուսանկարել, որովհետեւ դա կարող է շփոթություն առաջացնել։ Ցանկալի է ունենալ ընդամենը մեկ-երկու հստակ լուսանկար։ Փաստագրումը գործընթացի հաջողության գնահատումն է։

- *Նույնականացման պիտակ* (տե՛ս Հավելված 1)

Նախ՝ որոնում եւ դնում ենք նմուշի սկզբնական համարը կամ տալիս ենք նոր համար՝ հիմնվելով թանգարանի անվան, ցուցափեղկի անվանման եւ նմուշի համար մեր ընտրած հերթական համարի վրա, որը ցույց է տալիս տվյալ նմուշը վերցնելու հաջորդականությունը։

Ապա հերթականությամբ լրացնում ենք համապատասխան դաշտերը՝ հաստատության անվանումը, շենքի հարկը, սրահի համարը, պահարանը, հերթական համարը, նյութը, նմուշի անվանումը, չափերը (երկարություն, քաշ, բարձրություն, լայնություն):

Նմուշի քաշը նշելը շատ կարեւոր է, քանի որ, եթե այն գողանան, ավելի հեշտ կլինի դրա մասին հայտնելն ու Ինտերպոլի օգնությամբ հայտնաբերելը:

- *Գույքագրման թերթիկ* (տե՛ս Հավելված 2)

Գույքագրման թերթիկը շատ կարեւոր փաստաթուղթ է, որը կունենանք առաջին օգնության իրականացման ավարտին: Անհրաժեշտ է հետագայում ունենալ նաեւ ձեռագիր գույքագրման թերթիկի թվայնացված տարբերակը:

Գույքագրման թերթիկը ներառում է նմուշի հերթական համարը (սկսած 1-ից՝ առաջին վերցված նմուշից) եւ բոլոր տեղեկությունները՝ ըստ յուրաքանչյուր նմուշի նույնականացման պիտակի. սկզբնական համարը, տրված համարը, առարկայի տեսակը, նյութը, չափերը (երկարություն, լայնություն, բարձրություն), քաշը, գտնվելու վայրի կոդը, լուսանկարը կամ պլանի հղումը:

Կայունացում

Յուրաքանչյուր նմուշ, որը մտնում է կայունացման փուլ, իր վրա արդեն իսկ նույնականացման պիտակ ունի: Կայունացման թիմն աշխատում է նմուշի ստացած վնասվածքների վրա: Անհրաժեշտ է իմանալ, թե կոնկրետ վնասի դեպքում ինչ պարագաներ կարող են օգտագործվել (խոզանակներ՝ մետաղական նմուշների համար, խոզանակներ՝ տեքստիլի համար եւ այլն): Մի քանի բանալի բառերով պետք է փաստաթղթավորել առկա վնասը, նշել, թե ինչ մշակում է կատարվել (մաքրում, ապահովում), կայունացնող մշակում կատարողի անունն ու կոնտակտային տվյալները, արդեն կատարված աշխատանքի նկարը: Գույքագրման թերթիկում նշում ենք նաեւ, թե ինչ կայունացնող մշակում է տրվել նմուշին:

Փաթեթավորում

Կոնկրետ նմուշի համար օգտագործվող փաթեթավորման նյութերը պետք է համապատասխան լինեն տվյալ նմուշի նյութին: Օրգանական իրեր փաթեթավորելու համար կարող ենք օգտագործել մրգերի/բանջարեղենի տարաներ, բայց դրանք հարկ է լավ մաքրել, քանի որ տարաները կարող են պարունակել միջատներ, կենսաբանական նյութեր, որոնք հնարավոր է վնասեն նմուշը: Պետք է համոզված լինել, որ տպագրված թղթեր չեն օգտագործվելու տեքստիլից նմուշները կամ նկարները ծածկելու համար: Պետք է վստահ լինել, որ այն նյութերը,

որոնք օգտագործվում են փաթեթավորման համար, անվտանգ են մեր նմուշների փաթեթավորման ու տեղափոխման համար։ Կարեւոր է, որ նմուշի նույնականացման պիտակը չմնա փաթեթի ներսում եւ ցուցադրվի փաթեթի ճակատային մասում, որպեսզի ստիպված չլինենք բացել այն՝ նմուշը նույնականացնելիս։ Տարհանման դեպքում՝ նմուշները տեղափոխելիս, նույնականացման պիտակ պետք է լինի ինչպես տուփի վերեւում, այնպես էլ դրա մի կողմում։ Շատ կարեւոր է նաեւ փաթեթավորել եւ պիտակավորել այն փաստաթղթերն ու քարտեզները, որոնք ներառված են թանգարանի հավաքածուի մեջ ու հաճախ թիրախավորվում են վանդալների կողմից։

Տեղափոխում

Մենք նմուշները տեղափոխում ենք ժամանակավոր պահեստ, որն արդեն ընտրված է եւ պատրաստ։ Մեծ տարաների մեջ կարող ենք մի քանի նմուշ տեղադրել, իսկ դատարկ հատվածները պետք է լցնել բարձերով, որպեսզի տեղափոխվող առարկաները տարայի ներսում անշարժ մնան։ Տարայի վրա պետք է գրել նմուշների ընդհանուր թիվը, յուրաքանչյուրի նույնականացման եւ գրանցման համարները, ինչպես նաեւ տեղադրել տարայի հետ վարվելու/փոխադրման հրահանգներ. օրինակ, եթե այն փխրուն է ու պիտի տեղադրվի հորիզոնական կամ ուղղահայաց դիրքով կամ այլ բնութագրեր, որպեսզի համոզված լինենք, որ կարող ենք կազմակերպել այս նմուշների անվտանգ տեղափոխումը։

Փաստաթղթավորումը նոր պահեստում

Փաստաթղթավորման գործընթացը շարունակում ենք արդեն ժամանակավոր պահեստում։ Այստեղ փաստաթղթերում նշվում է այն անձը, որը տեղափոխել է տարան, սկզբնական գտնվելու վայրը լքելու, ժամանակավոր պահեստ մուտքագրվելու ամսաթիվն ու ժամը, ինչպես նաեւ տեղափոխման կոդը, որը ստանում է ժամանակավոր պահեստում։ Այնուհետեւ կունենանք տեղափոխման շարժին հետեւելու թերթիկը, որում նշվում են մուտքի համարը, տուփի համարը, տուփի մեջ առկա իրերի ընդհանուր թիվը, բեռնաթափման/փոխադրման հրահանգները, ում կողմից է ուղարկված, ելքի ամսաթիվը, սուրհանդակի/մեքենայի համարը, ստացման ամսաթիվը, տուփի համարը, տուփի մեջ գտնվող իրերի ընդհանուր թիվը, ում կողմից է ստացված։

Հավելված 1. Նմուշի նույնականացման տվյալներ

<table>
<tr><td>ՆՄՈՒՇԻ ՀԱՄԱՐ(ՆԵՐ) (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ)</td><td></td><td>ՏՐՎԱԾ ՀԱՄԱՐ</td><td></td></tr>
<tr><td>ՆՅՈՒԹ</td><td></td><td colspan="2" rowspan="7">ԼՈՒՍԱՆԿԱՐ/ՆԿԱՐ</td></tr>
<tr><td>ՆՄՈՒՇԻ ԱՆՎԱՆՈՒՄ</td><td></td></tr>
<tr><td rowspan="4">ՉԱՓԵՐ</td><td>Երկարություն</td></tr>
<tr><td>Բարձրություն</td></tr>
<tr><td>Լայնություն</td></tr>
<tr><td>Քաշ</td></tr>
<tr><td>ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ</td><td></td></tr>
<tr><td>ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐ</td><td></td></tr>
<tr><td rowspan="3">ՎԻՃԱԿ</td><td colspan="3">Առանց խնդրի</td></tr>
<tr><td colspan="3">Խնամքի կարիք</td></tr>
<tr><td colspan="3">Հատուկ խնամքի կարիք</td></tr>
</table>

Հավելված 2. Գույքագրման թերթիկ

Հերթական համար	
Սկզբնական համար	
Տրված համար	
Նմուշի տեսակ	
Նյութ	
Չափեր / երկարություն, լայնություն, բարձրություն/ քաշ	
Գտնվելու վայրի կոդ	
Լուսանկար կամ պլանի հղում	

Հավելված 3. Տեսակավորում եւ կայունացում

Քաշ	
Լուսանկարի կամ նկարի հղման համար	
Վնասի տեսակ	
Տրված խնամք (լրացվում է կայունացման ժամանակ)	
Ում կողմից է տրվել կայունացնող խնամքը	

Հավելված 4. Փաթեթավորում ու տեղափոխում

Ում կողմից է տեղափոխվել	
Ամսաթիվ	
Տեղափոխման կոդ	

Հավելված 5. Տեղափոխման շարժին հետեւելու ձեւաթուղթ

Մուտքի համար	
Տուփի համար	
Իրերի ընդհանուր քանակը տուփի մեջ	
Բեռնաթափման / փոխադրման ցուցումներ	
Ում կողմից է ուղարկված	
Լքելու ամսաթիվ	
Սուրհանդակի / մեքենայի համարը	
Ստանալու ամսաթիվ	
Տուփի համար	
Իրերի ընդհանուր քանակը տուփի մեջ	
Ում կողմից է ստացված	

Հեղինակ եւ խմբագիր՝ Գոհար Հակոբյան

Մասնագիտական խմբագիր՝ Նարեկ Վ. Թովմասյան

Լուսանկարները՝ Լիլիան Գալստյանի (2024 թ. մարտի 9-10 Աղվերանում կայացած ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ աշխատաժողով) եւ «Ֆոտոլուր» լրատվական գործակալության

Ձեռնարկի ստեղծմանը նպաստեցին՝

Աննա Գարգարյանը

Աստղիկ Մարաբյանը

Ամիրա Սադիք Ալինը

Արմինե Բադալյանը

Գեւորգ Տոնոյանը

Ելիզավետա Պետրոսյանը

Էսթեր Աբրահամյանը

Լիլիթ Պողոսյանը

Լուիզա Սեւունին

Հերիքնազ Հարությունյանը

Մարգար Սուքոյանը

Մարինա Օգանեզովան

Նորայր Իսկանդարյանը

Ծողակաթ Մլքե-Գալստյանը

Սոնա Հարությունյանը

Հրատարակվել է 2024 թվականին՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կողմից. Հայաստանի Հանրապետություն, Երեւան 0010, Մելիք-Ադամյան փողոց 2/2, www.agbu.org

©AGBU, 2024